«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Վիոլետա Գևորգյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Երևանի « 111 » ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն..... 3
Գլուխ 1 Ազգային տոներ, ծեսեր նկարագրություն..... 4
Գլուխ 2 Տոների և ծեսերի կազմակերպման
առանձնահատկությունները..... 9
Օրինակելի պարապմունք..... 12
Եզրակացություն..... 14
Օգտագործված գրականության ցանկ..... 15

Ներածություն

Երեխայի անձի ձևավորման և զարգացման մեջ էական նշանակություն ունեն խոսքի և հաղորդակցության զարգացումը:Հայտնի է,որ երեխայի մտածողությունն արմատական փոփոխությունների է ենթակվում,երբ նա ունակ է դառնում լեզվական հաղորդակցության ,և ուսուցումը նրան սովորեցնում է տիրապետել սեփական մտքերին (Լ.Ս.Վիգոտսկի):

Ազգային արժեքները կարևոր նշանակություն ունեն և ձևավորվում են պատմական զարգացման ընթացքում:Նրանք կազմում են ներկա կեցության հիմքը և բնականոն գոյության և զարգացման երաշխիքը:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան,կրթական և այլն:Մանկավարժի առաքելություններից մեկը համարվում է երեխայի մեջ դաստիարակել իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքներ:Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այդ արժեքները , որոնք ժառանգել ենք մեր նախնիներից: Ազգային արժեք են , իհարկե, մեր ազգային տոներն ու ծեսերը:

Հետազոտական աշխատանքիս վերնագիրն է «Ազգային տոների և ծեսերի կազմակերկման առանձնահատկությունները կրթական գործընթացում»:

Այս թեման ընտրել եմ ,քանի որ գտնում եմ ,որ շատ կարևոր է նախադպրոցական տարիքում բարոյական, ազգային նորմերի պահանելը:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է .

- Ներկայացնել ծեսերը
- բացատրել դրանց նշանակությունը
- երեխաներին ներգրավել ծեսերի իրականացման գործում՝ կազմակերպել դերային խաղեր, փոքրիկ միջոցառումներ
- դաստիարակել հայրենասիրություն,սեր դեպի ազգային և ավանդական արժեքները:

Հիմնական նպատակն է ծեսերը մոռացության չմատնել և մշտապես արդիականացնել , որովհետև դա հայ ազգի կայացման և ազգի հարստության հիմքերից մեկն է ՝ մշակութային մեծ ժառանգություն:

Նյութը ունի ներածական մաս.երկու գլուխ և եզրակացություն:Առաջին գլխում անդրադարձել եմ հայ ավանդական ծեսերին և տոներին , թե ինչ է իրենից ներկայացնում ծեսը ,ինչպես ենք այն նշում և ինչ կարող են սովորել ծեսի միջոցով:

Մանրամասն ներկայացրել եմ ծեսերի դերն ու նշանակությունը:

Երկրորդ գլխում ներկայացրել եմ ծեսերի գործնական մասը:Նպատակը՝ երեխաների մոտ զարգացնել սեր դեպի բնությունը , ծանոթացնել ազգային ծիսական տիկնիկների հետ :

Կարևոր է չմոռանալ ազգային մշակույթի արժեքները;Մանկավարժի առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգեևոր արժեքների ձևավորումը զարգացնելն ու սերմանելն է:

Գլուխ 1. Ազգային տոներն ու ծեսերը

Կրթական համակարգի հենց առաջին օղակից՝ մանկապարտեզից է սկսվում մանկան աշխարհճանաչման ուղղված տարրական գիտելիքների յուրացումը: Հենց մանկապարտեզից է սկսվում երեխայի վերաբերմունքը աշխարհի, մարդկանց , շրջապատի նկատմամբ:Հայ երեխայի բարության և առաքինության առաջին սերմնացանը քրիստոնեական տարրական գիտելիքների ուսուցումն է:

Մշակույթը չէր պահպանվի , եթե գոյություն չունենային սերնդնեսերունդ նրա փոխանցման միջոցները:Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը և ազգային տոները:Հայկական մշակույթը հնուց ի վեր , մինչ օրս էլ աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով:Մենք բոլորս այս տոները նշում ենք որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ , սակայն տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:Մենք հայերս մեր հիշողության , մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը ՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն:

Երեխայի աշխարհընկալման ,գեղագիտական ճաշակի ձևավորման համար առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային տոները, տաղավար տոներին նվիրված հետաքրքիր միջոցառումները :Ազգային արժեք են համարվում նաև ծեսերը.մշակույթը չեր պահպանվի և սերնդնեսերունդ չէր փոխանցվի,եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներ , որոնցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում առաջացած ծեսերը:Ծեսն իրենից ներկայացնում է ավանդական ,կրոնական արարողություն,որին հավատացյալները վերագրում են մոգական հատկություններ:Հայոց եկեղեցիներում ծեսերըհաստատել, սահմանել և կարգավորել են կաթողիկոսները՝ համաձայն Աստվածաշնչյան մեկնությունների :Ծեսը հավատացյալների վրա ներգործելու ազդու միջոց է:Ծեսերի գիրքը հին հայոց աշխարհում կոչվում էր Ծիսարան:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ ,որոնցից են Նոր տարին,Սուրբ ծնունդը,Տեառնընդառաջը,Բարեկենդանը,Ծաղկազարդը,Համբարձումը,Վարդավառը:

Մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը,որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսերը՝ ծեսերի միջոցով կարգավորել բնության երևույթները:

1.1 Ամանոր:Ժամանակագրական առումով առաջին ժողովրդական տոնն է:Մինչև 19-րդ դարը հայերը տարվա սկիզբը համարել են Նավասարդը ,որը շարժական տոն է,նշվել է մինչև հոկտեմբեր-նոյեմբեր ամիսները:19-րդ դարում ըստ Սիմեոն Ա. Երևանցու տոնացույցի Նավասարդը փոխարինվել է Ամանորի՝ Նոր տարվա,որն էլ դարձել է տարվա սկիզբ,ամրագրվել հունվարի 1-ով իբրև անշարժ տոն:Ամանորը երեխաների ամենասիրված տոներից մեկն է :Մանկապարտեզում ամանորյա հստակ տեղ է գրավում տոների շարքում: Երեխաները մեծ ոգևորությամբ պատրաստվում են տոնին ,պատրաստում են գեղեցիկ զարդարանքներ,զարդարում են տոնածառը,միմյանց գեղեցիկ բացիկներ նվիրում:

1.2 Սբ. Զատիկ – Զատիկ կամ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությանտոն ,քրիստոնյա եկեղեցիների,այդ թվում նաև հայ առաքելական եկեղեցու հնագույն և գլխավոր տոնը , հինգ տաղավար տոներից մեկը:Զատիկը շարժական տոոն է , այսինքն յուրաքանչյուր տարի նրա նշման օրը փոխվում է: Հայ առաքելական եկեղեցին այն նշում է գարնան գիշերահավասարին հաջորդող լիալուսնի առաջին կիրակի օրը,որն ընկնում է մարտի 21-ից մինչև ապրիլի 25 ը (35օր) ընկած ժամանակահատվածում:

Հայկական ավանդույթում հավկթախաղ է տեղի ունենում երկու հոգու միջև ,կոտրող հավկիթի տերը հաղթող է ճանաչվում և ուտում կոտրած հավկիթը:Զատկական արարողությունները սկսվում էին շաբաթ և ավարտվում երկուշաբթի օրերին:Շաբաթ Զատկի տոնին նախապատրաստվելու օրն էր. կարգի

էին բերում տոնական հագուստը,հարդարում բնակարանը,տան դռների շրջանակներին փաքցնում էին զատկական կարմիր ձվի կճեպներ,թխում խմորեղեն:Զատկի կերակուրները եփելիս կամ հավկիթները ներկելիս կրակի մեջ օգտագործում էին Տյառնընդառաջից և Ծաղկազարդից մնացած խանձված ձողերը և ճյուղերը:

Զատկական ձուն օրինակն է ամբողջ աշխարհի, ինչպես որ իմաստուններն ասում են ՝ դրսի կեղևը նմանվում է երկնքին մզղաձևը՝ օդին և սպիտակուցը՝ ջրին ,դեղինն էլ երկիրն է Թորգոմ Վարդապետ:

1.3 Ծաղկազարդ – Տոնը նշվում է Զատկից մեկ շաբաթ առաջ ՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Երուսաղեմ մտնելու օրվա:

Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով:Առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ,որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին , որոնք պահվում էին մինչև հաջորդ Ծաղկազարդ:Ծաղկազարդի օրը հռչակված է որպես մանուկների օրհնության օր ,քանի որ Տիրոջ Երուսաղեմի տաճար մտնեու ժամանակ մանուկներն աղաղակում էին ասելով.«Օրհնություն Դավթի որդուն»:Ծաղկազարդի տոնից հետո ՝ երկուշաբթիից մինչև Սբ.Հարության տոնը կոչվում է ավագ շաբաթ:

1.4 Բարեկենդան-Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն:Այն ուրախության և զվարճանքի օր է ,հիշեցնում է Ադամի և Եվայի դրախտային կյանքը,երբ նրանք ապրում էին վայելքի և անհոգության մեջ :Տոնը կապ ունի գարնան սկսվելու հետ:Եվ պատահական չէ,որ զվարճությունները,որոնք բնությունն արթնացնող, մարդկանց վերակենդանացնելու խորհուրդ ունեին:Այդ օրը մարդիկ միմյանց մաղթում էին բարի կենդանություն:Հետագայում քրիստոնեությունը հարմարեցրեց իրեն և դարձրեց Մեծ Պահքին ն«Ազգային տոների և ծեսերի կազմակերկման առանձնահատկությունները կրթական

գործընթացում»ախորդող շաբաթվա տոն,որը նշվում էր կերուխումով մասսայական խաղերով մրցույթներով,թատերախաղերով,պարերով և երգերով:Մեծ Պահքին նախորդող կիրակին բուն Բարեկենդանի օրն էր :Պահքի կարևոր լինելը մարդկանց ցույց է տվել Քրիստոս:Նա անապատում քառասուն օր է անցկացրել:Մարդիկ Հիսուս Քրիստոսի օրինակով են պահում Մեծ Պահքը:Մեծ Պահքի քառասուն օրերին գումարվել են նաև Զատիկին նախորդող ինը օրերը և այն տևում է քառասուն ինը օր:Մեծ Պահքն ավարտվում է Զատիկի Հիսուս Քրիստոսի Հարության տոնով:

Ծիսական պարեր – Ուրախ պարերը Բարեկենդանի անբաժանելի մասն են եղել :Պարերը սկսվում էին Բարեկենդանի առաջին օրը և օրեցօր ավելի

աշխուժանում:Վերջին օրերին դրանք վերածվում էին համագյուղական միջոցառումների:

Ծիսական տիկնիկներ-Բարեկենդանի անբաժան մասն էին Ուտիս տատը և Պաս պապը կամ ակլատիզը:Ուտիս տատը համարվում էր Բարեկենդանի ,այսինքն ՝ ճոխ կերակուրների հովանավոր տիկնիկը,որը մտցվում էր հրապարակ՝ մարդկանց խրախճանքի հրավիրելու:

Ծիսական ներկայացումներ –Տոնի մասն էին կազմում նաև թատերական ներկայացումները, որոնց ժամանակ ծիծաղաշարժ կատակներով քննադատության էին ենթարկվում մեծավորներն ու իշխանավորները:Ներկայացումներից առավել հայտնի էին «Փաշա,Քյոխվա,Շահ-Շահ» և այլ անուններով հիշատակվող խաղեր:

Գլուխ 2 . Տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները : Կրթական գործընթացը

2.1 Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ,հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է :Երեխան ծեսերի,տոների մասնակցելով դառնում է այս ամենի կրողն ու փոխանցողը:Ծեսերի , տոների իրագործման ընթացքում խոսքի զարգացումը տեղի է ունենում բնական հաղորդակցման միջավայրում:Երեխան խոսում և շփվում է մեծահասակների և հասակակիցների հետ:Ծեսերի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ այն է ,որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զարգանում են ծեսին և տոնին նախապատրաստվելու և իրագործելու գործունեության ընթացքում:Երեխաները ծեսի և տոնի կազմակերպման ընթացքում շփվում են միմյանց հետ հաղորդակցվում են,իրենց անելիքները քննարկում են ընկերների հետ:Դաստիարակը երեխաներին ծեսի և տոնի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ տեղեկություններ է հաղորդում:Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը:Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշատանքներին, երեխաների հետ պատրաստել ծիսական պարագաներ,նյութեր:Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում ներկելու, կտրելու տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու:Նաև շատ կարևոր է ,որ երեխաները աշխատեն խմբերով ՝ բոլոր երեխաներին ներգրավել աշխատանքի մեջ:

2 .2 **Ծիսական խաղերի իրականացում** – Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է :Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, սակայն մենք ունենք շատ հետաքրքիր ծիսական,զատկական խաղեր:Ծիսական խաղերի ընթացքում երեխան յուրացնում է ծանոթ և անծանոթ երևույթներ, դրանց միջոցով հասկանում է ծեսի դերն ու

նշանակությունը: Ծիսական խաղերը ազդում են երեխայի խոսքին նպաստող մյուս ոլորտների ՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Ծիսական խաղերը շատ դրական են ազդում նաև երեխայի զգացմունքային զարգացման վրա: Ծիսական խաղերը շատ կարևոր ազդեցություն է ունենում նաև երեխայի մտավոր զարգացման վրա: Նաև երեխայի համար շատ մեծ նշանակություն ունեն ծիսական երգն ու երաժշտությունը,այն մեծ ազդեցություն է գործում երեխայի ասպետների վրա՝ զգացմունքային , սոցիալական, լեզվական:

Ծիսական երգերից են «Ճոր Պար», Հ. Ավետիքյանի «Գացեք տեսեք» և այլն:

Երեխաների զգացմունքների վրա շատ դրական է ազդում այն, երբ նրանք տեղեկանում են, թե ովքեր են կատարել այդ երգերը : Նրանք ավելի սիրով և ոգևորությամբ են կատարում այդ երգերը:

Նախադպրոցական ուսումնական հաստատության սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է,այդպես ավելի տպավորիչ և հ

ասանելի է դառնում ծեսը երեխայի համար:

Նախա,կրթարանում գործունեության հիմնական ձևը իրականացնում են խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- շարժողականությունը
- հաղորդակցվելու կարողությունը

Նաև ծիսական խաղերը շատ դրական են ազդում երեխայի խոսքին նպաստող ոլորտների՝ սոցիալական, հուզական և մտավոր զարգացման վրա:
Երեխաները սիրով են սովորում և երգում ծիսական երգերը:

Թեմատիկ միջոցառումների հետ մեկտեղ նաև իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Սուրբ Զատիկը, Ծաղկազարդը, Բարեկենդանը: Այդ միջոցառումների ժամանակ դահլիճը ձևավորում է ազգային զարդանախշերով և նոր շունչ է ստանում ազգային տարազը,որով երեխաները զգեստավորվում են և նմանվում իրենց նախնիներն: Այս տոները վերածվում են հանդիսության շնորհիվ գեղեցիկ ուրախ և հետաքրքիր ծիսակատարություններ

2. 3-Ուսուցման Գործնական Մեթոդները իմ աշխատանքում

Մասնակցություն ունենալով «քայլ առ քայլ » բարեգործական ծրագրին, ինչը շատ ողջունելի է և շատ ուսուցողական:Վերապատրաստման ընթացքում ծանոթացա մի շարք առաջավոր մեթոդների,որոնք արդեն կիրառել եմ իմ աշխատանքում:

Երեխաների մեջ ձևավորվել եմ իմացական հմտություններ, սեփական մտքերն ու կարծիքներն ազատ արտահայտելու,ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, ճիշտ և գրագետ խոսելու կարողություններ: Երեխաներն աշխատում են զույգերով, խմբերով: Յուրաքանչյուր խումբ կամ զույգ աշխատում է մեծ ոգևորությամբ և պատասխանատվությամբ: Թիմերում չկան թույլ և ուժեղ երեխաներ,ճիշտ և սխալ կարծիքներ:

Օրինակելի պարապմունք

Առարկա	Թեմա	Տևողություն
Խոսքի զարգացում	Ծաղկազարդ	25-30

Նպատակը- երեխաներին հաղորդել գիտելիքներ ազգային և կրոնական ծեսերի,մասնավորաապես Ծաղկաազարդ տոնի մասին:Բացատրել տոների, ծեսերի կարևորության մասին, որ ծեսը իր մեջ ներառում է երգ-պար, բեմականացում,խաղեր: Զարգացնել թիմային և զույգերով աշխատելու կարողություններ,սովորեցնել խմբային աշխատանքի պարզ կանոններ՝ ինքնուրույն վերցնել անհրաժեշտ նյութեր աշխատանքի հաամար:

Հարստացնել երեխաների բառապաշարը նոր բառերով և բառակապակցություններով:

Նյութեր- Գրատախտակին փակցված են« Ծաղկազարդ »պատկերող պաստառներ, ուռենու ճյուղեր,մոմեր,ծիսական տիկնիկներ,հատիկ պատրաստելու համար չամիչ,շաքար,սիսեռ

Պարապմունքի ընթացքը

Խթանման փուլ-գրատախտակին փակցնում եմ Ծաղկազարդի նկարներ, հարցնում եմ երեխաներին,թե ինչ գիտեն Ծաղկազարդ տոնի մասին, ինչ ծիսակատարություններ են կատարվում:Թույլ եմ տալիս մտածել զույգերով և պատասխանել իմացածը: Այնուհետև երեխաների հետ առանձնացնում եմ ճիշտ և սխալ մտքերը: Երեխաներին ցուցադրում եմ հատիկ պատրաստելու համար անհրաժեշտ մթերքները (չամիչ,շաքար, սիսեռ):

Իմաստի ընկալում

Երեխաներին ներկայացնում եմ հայկական տոներն ու ծեսերը, նաև նշում եմ,որ Ծաղկազարդի տոնին նշվում է մանուկների օրհնության օր:

Երեխաները մոտենում են մի էտած ծառ են դնում ջրի մեջ, ապա վերցնում են ուռենու ճյուղերը և ասում.

- մեջքը տեղը կամքը տեղը

-քամու տեղ արտի դեղ

Երեխաները դաստիարակի օգնությամբ պատրաստում են Հատիկը, բոլորը հյուրասիրվում են: Երեխաները երգում են Խնկի Ծառ երգը: Երեխաները ուռենու ճյուղերից պատրաստում են գլխապսակներ:

Կշռադատման փուլ- ամփոփում

Դաստիարակը հարցնում է երեխաներին, թե ինչ տոն է Ծաղկազարդը,ինչ իմաստ ունի այն իր մեջ, որ տոնն է հաջորդում Ծաղկազարդին:

Երեխաները պատասխանում են հարցերին զույգերով կամ փոքր խմբերով:

Դաստիարակը հարցնում է, թե ինչի համար էին ուռենու ճյուղերը, ինչի համար ենք պատրաստում գլխապսակներ: Ինչ խորհուրդ ունի իր մեջ Ծաղկազարդը:

Դաստիարակն առաջարկում է երեխաներին, որպես պարապմունքի ավարտ երգել Բարության ծառը երգը:

Տնօրեն – Շատ կարևոր է նախադպրոցական տարիքի երեխաների հետ զրուցել հայ մշակույթի մասին,տեղեկություններ տալ տոների,ծեսերի և ավանդույթների մասին պարապմունքների ժամանակ: Բացատրել անցկացման եղանակը և ծեսերի ու տոների իմաստը: Շատ դրական եմ գնահատում երեխաների ակտիվությունը, խմբերով աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը և ձգտումը: Պարապմունքի ընթացքում երեխաները բավականին գիտելիքներ ձեռք բերեցին ազգային մշակույթի մասին:

Մեթոդիստ- մանկապարտեզն այն վայրն է, որտեղ պետք է նշվեն և անցկացվեն տոնակատարություններ: Շատ կարևոր էր, որ երեխաներն ինքնուրույն պատրաստել էին ծիսական տիկնիկներ, գլխապսակներ:

Դաստիարակ – Շատ տպավորված եմ երեխաների ճիշտ և գրագետ պատասխաններով: Երեխաները կարողանում էին ճիշտ կազմել նախադասություններ, լրացնում էին միմյանց, զարգացած էր խոսքը:

Դաստիարկը հասավ իր նպատակին:

Եզրակացություն

Այսպիսով ազգային մշակույթի յուրացումը՝ ծեսերը,տոները մանկապարտեզում երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկն է

:Երեխաները դառնում են այս ամենի կրողներն ու փոխանցողները:Ծեսերի և տոների կազմակերպման ժամանակ երեխաները շփվում են ,հաղորդակցվում հասակակիցների,մեծահասակների հետ:Նրանք մեկնաբանում են ,հայտնում իրենց կարծիքը ,հարց են տալիս և պատասխանում հարցերին:Այս բոլորը նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը:Մեր գործնական աշխատանքները ցույց տվեցին,որ ծեսի կազմակերպման ընթացքում երգերը,խազերը,բանաստեղծությունները,զրույցները:

- զարգանում է երեխաների խոսքը,նոր բառեր են սովորում և արտասանում դաստիարակի հետ,շտկում ճիշտ արտաբերումը՝ առանց լարվելու
- բնական,անկաշկանդ մթնոլորտ են ստեղծում,երեխան խոսում է,բացատրում,մեկնաբանում:
- երբ խոսքն ու գործողությունը միահյուսվում են,տեղի են ունենում միևնույն ժամանակ ,երեխան փորձում է պատմել իր գործողությունները,զարգանում է երեխաների միտքը,նկարագրական խոսքը,մտքի հաջորդականությունը,ճիշտ շարադասությունը
- զարգանում է երեխաների ուշադրությունը և երևակայությունը
- զարգանում են սոցիալական հմտությունները,ընկերասիրությունը,երեխաները իրար օգնում են ,աջակցում,զիջում են միմյանցշարունակում ընկերոջ միտքը,հարգում դիմացինի խոսքը
- արդյունքի հասնելով՝ երեխան ոգևորվում է ,ինչը նպաստում է նրա հուզական զարգացմանը,հույզերը դրսևորելու,դրանց մասին խոսելու հնարավորություն է տրվում երեխաներին:

Օգտագործված գրականության ցանկը

1. Հրանուշ Խառատյան «Հայ ժողովրդական տոներ»
2. Ժենյա Խաչատրյան «Ծիսական պարեր»
3. Ռուդիկ Հարոյան «Զատիկ»
4. ՌԻմա Ռստկյան «Հայկական Ծեսեր»
5. Մայր Աթոռ Սբ. Էջմիածին Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոն «Ծաղկազարդը տոնում են մանուկները»